



ԱՔԻԼԼԵՍ



ՊԵՏԶՐԱՏ

891.715

Չ-90

26 NOV 2011

Apr.

3-1583a

891.7/6

3-90

ԱՔԻԼԼԵՍ

(Վ.Ա.ԺՈՒԿՈՎՍԿՈՒՅ)

ԹԱՐԳԱՆ

ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



Инд. № 6036

ՊԵՏԶՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿԿՈՑ ՄԱՆԿԱՊԱՏ ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՁԵՐՈՎԱՆ 1938

25 APR 2013

Պատ. խմբագիր՝ Նվ. Բաժանյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գառնարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաթանյան



4866-87

Պատվիրի լիազոր. Ա.—4019. Հրատ. 4501.

Պատվեր 201 Տիրաժ 5000.

Քուղթ 63x74 Տպագր. 1/2 մամ.

Մեկ մամ 24,480. նշան. հեղինակային 1/6 մամ.

Հանձնված է արագընթիվային 26 փետրվարի, 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 30 հուլիսի, 1938 թ.

Պատրաստի է տպարան, Երևան, Հինինի 98.

Միգում կորավ Իդա սարը,
Մըռայեցավ Տրովադան,
Լուռ ե ուզմի հարթավայրը,
Քընած բանակն Ատրիդյան:
Խաղաղ են շուրջ: Առկայծում են
Խարույկները բանակի,
Յերկնի ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկմեկի:

Ծագեց պայծառ լուսնեղջյուրը
Ծովի վերա եզեյան,
Բարձր ափերն ու աստղերը
Ծովի խորքում ցոլացան:
Դատարկ դաշտում յերևում է
Մենակ կառքը Պրիամի.—
Տանում է իր Հեկտորի դին
Գոռ*) բանակից հույների:

Ահա կանգնեց ծովի ափին
Աքիլլեսը ահարկու.
— Ընկավ, ծերուկ, քո Հեկտորը,
Հանգավ լույսը քո հոգու:
Անդրումաքեն ու Հեկաբեն
Դարպասներում անդադար
Քեզ են մընում... դարձիդ բոպեն
Կյանք կամ մահ ե նրանց համար:

*) Գոռ—ահուլի (զոբավոր):

Յեվ տըխրաբեր արշալուսին
 Կըբուրե խունկ հաշտարար,
 Թաղման յերգով կըհեծեծեն
 Ամեն մի տուն ու տաճար:
 Հայր, մայր, այրի մաղթանքներով
 Սափոր կածեն թանգ փոշին,
 Ու, դըժոխքում, աղոթքներով
 Հանգիստ կըտան հերոսին:

Խեղճ ալևոր, խոնարհեցիր
 Գըլուխդ իմ առաջին,
 Յեվ այս ձեռքը համբուրեցիր,
 Վոր լաց տըվավ քո աչքին...
 Վորդուդ մասին եր քո աղերս,
 Ո՛ր, մի տըտմիր, ալեղարդ,
 Մի բախտ վըճոեց յերկինքը մեզ,—
 Ինձ ել ընկճեց Արամաղդ:

Մոտ ե ժամըս. պատրաստած ե
 Նետը անգուլթ որհասի,
 Յեվ պարկուհին*) ընդհատել ե
 Արդեն որերն իմ կյանքի:
 Ճըռընչում ե դժոխքի դուռը,
 Գուժում ե ձայնն ահուելի:
 — Վերջացած ե, հանգավ ջահը
 Պելիզեսի որերի...

Ո՛վ, այս ափից յետ չի գալու
 Յեվ քու վորդին անվնաս.
 Շուտով, շուտով պիտի ե դու,
 Ո՛վ Պելեսոս, վորբանաս:
 Կանցնի ոռգմի արհավիրքը,
 Աքիլեսիդ կըսպասես,

*) Պարկուհի—(հնում) բախտի աստվածուհի:

Կըգարդարես արքունիքը՝
 Շուք ու փառքով ընդունես:
 Մըտիկ կանես դատարկ ծովին,
 Ափից տըխուր ու տըրտում.
 Թե չե՞ն գալիս արդյոք նավեր,
 Առագաստ չի՞ յերևում...
 Նավեր կըգան Իլիոնից,
 Յես չեմ լինի վոչ մեկում,
 Յես չեմ զարթնի մահվան քընից,
 Ու կը մնամ այս հովտում...

Իզուր վերջին տագնապի մեջ
 Դու քո վորդին կըխնդրես,
 Ու կարկամող բազուկներով
 Նրան կողքիդ կը փընտրես:
 Սիրած յերկրից ժամն անջատման
 Չի քաղցրացնի նա այն ուր,
 Ու մինչ ափերն մոռացուլթյան
 Չի տարածվի ձայնը հոր:

Իմ հայրենիք, վըճիտ ջրեր,
 Չըքնաղ վայրեր հարազատ,
 Յեվ ձիթենիք ու դավնիններ,
 Հովիտների շուք ու զարդ,
 Ճոխ ծաղկեցեք, փըթըթեցեք,
 Ինչպես առաջ, աննըման,
 Ինչպես առաջ, միշտ թընդացեք,
 Միայն ձայներով խընդուլթյան:

Բայց Աքիլես ու Պատրոկլես
 Ել չեք տեսնի դուք բնավ...
 Սպերքի ջրեր, բազուկըս ձեզ
 Գըլխիցըս մազ խոստացավ,
 Բայց գըլուխըս փոթորկալի

Պատերազմում ահագին
Պատրոկլեսին յես զոհեցի,
Եւ չըսպասեք իմ տուրքին:

Պատրաստել ե նետը արդեն
Ապոլլոնը անողոք,
Ըսպասում ե նոր յեկվորին
Քարոնը սե Ստիքսի մոտ:
Յեվ ավերից մոռացության
Պատրոկլեսը գիշերով
Յեկավ ինձ մոտ թեթեւ, անձայն,
Վորպես յերազ թրուչելով,

Վորպես շունչը մեղմ գեփյուռի
Նա շըշընջաց ինձ վըրա,
Նրա ձայնը յես լըսեցի,
Վեր նայեցի ու տեսա՝
Քընքուշ զեմքին հետք արտոսրի*)
Յեվ անջատման խորին ցավ...
Ձեռքըս իրեն տարածեցի...
Դատարկ մըթնում չըքացավ...

Ընկյուրոսից նեոպտուեմ
Դեպի հեռուն կըլողա,
Մի անձանոթ ափ կըտեսնի
Կանաչ բըլրակն իր վըրա:
Նավավարը այն ժամ կասի՝
Դարձած կողմը բըլրակի.
— Ահա շիրիմն Աքիլլեսի,
Այն ել տեղն ե բանակի...

— Այնտեղ, պարսպից նա գիշերով
Յերևում եր մեզ ահեղ,

Անտանելի հուրն աչքերում,
Սաղավարտով ճաճանչեղ.
Յեվ յեռակի փորոտալով,
Ահ եր ազդում քաղաքին,
Ու Տրոյացին գունատ զեմքով
Ձենքը ձըգում եր գետին:

Այնտեղ ձեռքը Ատրիդեսին
Տալով դաշը հաստատեց...
Այնտեղ կառքով նա մոլեգին
Քաղաքի վրա հարձակվեց:
Այնտեղ հողում իր յետևից
Քարշ տըվավ դին Հեկտորի,
Հառեց աչքերն ըսպառնալից
Վերան լըքած Տըրոյի...
Ու իր նավից նեոպտուեմ
Կիջնի ափը սըրբազան,
Վոր միայնակ բըլրի վըրա
Դընի և սուր, և վահան:
Շուրջը արդեն դատարկվել ե...
Խաղաղ Միմույս ու Քըսանտ,
Բաղեղ ու փուշ պատատել են
Տրոյադային քարուքանդ:

Կանցնես դաշտը պատերազմի,
Ուր Աքիլլեսն ե կըոված,
Կըտեսնես հորանն*) յերեսերի
Շիրմաց շուրջը մոռացված:
Ու քեզանից վերև հանկարծ
Կըլըսես ձայն թևերի...
Մենք կըլինենք,—թև թևի տված,
Ընկերներըս հին որերի...

*) Արտոսր—արցունք:

*) Հորան—խումբ, սյուրու:

Այնժամ հիշիր Աքիլեսին,
Յերկրից արագ նա անցավ՝
Բախտը նրան անփառունակ
Այստեղ մի դար խոստացավ,
Բայց, մերժելով դատարկ կյանքը,
Փառքի բոպեն ընտրեց նա,
Ու ընկերի համար մեռավ,
Հավատարիմ մինչև մահ»:

Լրոնց Աքիլ... Մուլթն ե իդան,
Իլիոնը դեռ տըխուր,
Քընած բանակը Ատրիդյան,
Պատերազմի դաշտը լուռ:
Ու ծըխալով առկայծում են
Խարույկները բանակի,
Յերկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մեկմեկի:

А. 1939 г.
Акт № 40
Вкладн л. _____

ՀՀ Ազգային գրադարան



NL0386626

56

3359

ԳԻՆԸ 35 407.

13-1583

ՇԱՊՐԿԸ ՅԵՎ ՏԻՏՈՒԼԸ
Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

ԱՒԻԼԼ

ԴԻՅ ԱՐՄ. ՏՏՐ ԵՐԵՎԱՆ 1938Դ.